

երեւելի մտաւորական կիներ: Պլոտինոսի քաջալերողներուն մէջ, իր կարեւոր տեղը ունէր Նաեւ Հռոմի օրուան կայսր **Գալլիենոս** (Gallienus, 218 – 268 թ.) եւ իր կինը՝ կայսրուհի *Սալոնինա*:

Օգտուելով կայսեր բարեկամութենէն, Պլոտինոս կը ծրագրէ Հռոմէն հարաւ գտնուող, *Կամպանիոյ* (Campania) շրջանին մէջ Նոր քաղաք մը հաստատել, որ պիտի կոչուէր Պլատոնուպոլիս (Platonopolis) անունով: Հոն պէտք է Պլատոնի կառավարութեան բոլոր օրէնքները կիրարկուէր: Ինք եւս, իր դպրոցին ու իր աշակերտներուն հետ պիտի հաստատուէր Նորակերտ այս քաղաքին մէջ: Պորփիրիոսի համաձայն, իր ուսուցչի այս ծրագիրը յաջողութեան մեծ կարելիութիւններ ունէր, սակայն դժբախտաբար չիրականացաւ՝ պալատական դաւադրութիւններուն պատճառով, որոնց իբրեւ հետեւանք պատահեցաւ *Գալլիենոս* կայսեր վաղահաս մահը:

Հնադարեան փիլիսոփաներու օրինակով, Պլոտինոս ոչ միայն տեսականօրէն կը զբաղէր իր նիւթով ու կ'ուսուցանէր փիլիսոփայութիւնը, այլեւ փիլիսոփայութիւնը ընտրած էր, որպէս իր գործնական ապրելակերպը, իր իղէալական կենցաղը: Այս իմաստով, Պլոտինոս բացարձակօրէն կը հետեւէր խստակեաց սննդառութեան (բուսակերութեան) եւ ոգեղէն կեդրոնացման, որուն այժմ *մտավերացում*¹⁰⁻¹⁰¹ (Meditation) կարելի է կոչել:

Իմացութեան իր բարձր ձգտումը, միաժամանակ, կրօնական փրկութեան իր ձգտումն էր: Պլոտինոս չէր հետեւէր կրօնական աւանդական ու հաւաքական կենցաղին եւ չէր մասնակցեր սովորութիւն դարձած կրօնական արարողութիւններուն կամ տօնակատարութիւններուն. ան կրօնքին հանդէպ որդեգրած էր խիստ անձնական տարբերակ մը:

Պլոտինոսի համաձայն, եւ իր իսկ խօսքերով՝ «*աստուածները պէտք է քովս գան եւ ոչ թէ ես՝ իրենց մօտ երթամ*»: Պլոտինոս կը ձգտէր իր *Աստուածութեան* հետ խորհրդապաշտական միացման կամ միայարման: Պորփիրիոսի համաձայն, ուսուցչին հետ ապրած իր 5 տարիներու շրջանին, Պլոտինոս յաջողած է 4 անգամ իրականացնել իր Աստուածութեան հետ միացումը կամ միայարումը (յուն.՝ *henosis*, այս մասին հետագային՝ աւելին):

268 թուականը ճակատագրական եղաւ 63-ամեայ Պլոտինոսի համար: Չինք մեծապէս քաջալերող Հռոմի Կայսր *Գալլիենոս* դաւադրութեան մը հետեւանքով կը սպաննուէր: Այս դժբախտութեան կողքին, Պլոտինոսի երկու Նշանաւոր աշակերտները, որոնք Նաեւ դասախօսներ էին իր դպրոցին մէջ, կը հեռանային Հռոմէն.- *Ամելիոս* կը մեկնէր դէպի Սուրիա, իսկ *Պորփիրիոս*՝ դէպի Սիկիլեան կղզի (ժամանակաշրջան մը հանգստանալու համար): Ասոնց վրայ կ'աւելնար, Պլոտինոսի ծանր հիւանդութիւնը, ան ա'լ կարող չէր գործելու ու բոլորովին կը քաշուէր, իր աշակերտներէն Տեթոսի իրեն կտակած առանձնատունը:

Բժիշկ եւստոքիոս Ալեքսանդրացին, որ Նոյնպէս Պլոտինոսի աշակերտներէն կը նկատուի, կը ստանձնէ իր ուսուցչին խնամքն ու դարմանումը, մինչեւ անոր մահը՝ 270 թուական: